Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (ՕՉՄԿ/OIML)» թղթակցային անդամ դառնալու մասին նամակ-համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

12.03.2025

ՕՉՄԲ, Տյուրգո փողոց 11, 75009, Փարիզ, Ֆրանսիա

Տնօրեն՝

Էնթնի Դոնելան

Նամակ Օրենսդրական չափագիտության միջազգային բյուրոյին (ՕՉՄԲ)

ՕՉՄԿ-ի թղթակցային անդամ դառնալու հայտ ներկայացնելու մասին

Հարգելի՛ պրն Դոնելան,

Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Էկոնոմիկայի նախարարության, սույնով հայտ է ներկայացնում 2025 թվականից Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության թղթակցային անդամ դառնալու վերաբերյալ: Որպես թղթակցային անդամ՝ Հայաստանի Հանրապետությունն իրավունք կունենա՝

- ստանալու տեղեկություններ ՕՉՄԿ-ի գործունեության վերաբերյալ նույն կերպ, ինչ անդամ պետությունները,
- ունենալու հասանելիություն ՕՉՄԿ-ի բոլոր հրապարակումներին,
- մասնակցելու ՕՉՄԿ-ի նախագծային խմբերի տեխնիկական աշխատանքներին՝ առանց ձայնի իրավունքի,
- ներկա գտնվելու ՕՉՄԿ-ի համաժողովի նիստերին եւ Օրենսդրական չափագիտության միջազգային կոմիտեի նիստերին՝ առանց ձայնի իրավունքի,
- մասնակցելու ՕՉՄԿ-ՍՀ-ին որպես ասոցացված անդամ եւ հետեւաբար ընդունելու եւ օգտագործելու ՕՉՄԿ-ի սերտիֆիկատները եւ ՕՉՄԿ-ի տեսակի գնահատման հաշվետվությունները, որոնք տրամադրվել են ՕՉՄԿ-ՏՄ-ների կողմից, եւ

- մասնակցելու Կառավարման կոմիտեի աշխատանքներին՝ առանց ձայնի իրավունքի:

Էկոնոմիկայի նախարարությունը պատասխանատու է օրենսդրական չափագիտության ոլորտում քաղաքականության մշակման համար, իսկ «Ստանդարտացման եւ չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն իրականացնում է օրենսդրական չափագիտության ոլորտի քաղաքականությունը:

Հետեւաբար ՕՉՄԿ-ի հարցերով կոնտակտային անձը կլինի՝

«Ստանդարտացման եւ չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար Ալբերտ Բաբայանը, a.babayan@armstandard.am:

Հայաստան, 0051, Երեւան, Կոմիտասի պող. 49/4 շենք, info@armstandard.am:

Խնդրում ենք հաստատել սույն դիմում-գրության ընդունումը, որպեսզի հնարավոր լինի ավարտին հասցնել դրա մեկնարկի համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերը:

Հարգանքով՝ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

ՕՉՄԲ-ի տնօրեն՝ ԷՆԹՆԻ ԴՈՆԵԼԱՆ